

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԶՈՒՄԱԾԵԱՆԻ «ԶԷՄԻՐԷ»Ի ԱՌԹԻ

Շարունակում էք 14-էն

գրադուրեր 100-ամեայ լուսթեան փոշիների մէջ թաղուած մի ձեռնագիր օպերա պեղելու, դրա մէջ գրական նիւթի մի շարք շերտեր համահարթեցնելու, ամբողջ պարտիտուրան նորոգելու, խմբագրելու, կատարման մակարդակի հասցնելու գործում: Եւ այս «մարմին»ը իր մէջ պիտի ունենար ոչ միայն բանասէրը, ոչ միայն պատմաբանը, այլ առ հասարակ ջուխաճեանագիտութիւնը ամբողջութեամբ: Քանի որ այս ասեցի, յաւելեմ նաեւ որ վերջին հինգ տարիները ընթացքին, Պարսումեանը բեմ է բարձրացրել նաեւ Չուխաճեանի «Քէօսէ Քեհիան», եւ «Լէպլէպիճին», եւ այս գիտական մի ամբողջ հիմնարկին փոխարինած միայնակ երաժիշտը, Չուխաճեանի «Զէմիրէ» պարտիտուրը մաքրել-խմբագրելուց յետոյ նուագավարի փայտիկը ձեռքն է առել՝ կենդանի հնչողութեան վերածելու այն: Իրօք, որ ահռելի ծաւալների աշխատանք է տարել իմ բարեկամը՝ Վաչէ Պարսումեանը, եւ լաւ է, որ օպերան բեմադրելու ընթացքին իր կողքին են եղել հրաշալի գործընկերներ, չուխաճեանական ամբողջ մի կոթող վերականգնելուն նուիրուած արուեստագէտներ-սիրողներ: Խորը յարգանքի են արժանի բոլորը մէկ առ մէկ:

Այս տեսակ հակաճառաւ մի աշխատանքի շուրջ մեզանում միշտ գոյացել է երբեմն շշուկներով, երբեմն մեծախօսութեան երանգով հարցականներ, որոնց պատասխանները տարբեր առիթներով առաւել կամ նուազ ծաւալին, խորքային թէ մակերեսի բացատրականներով տրուել են, ու միեւնոյն է՝ հարցը ամէն անգամ մէջտեղ է գալիս: Օրինակ՝ «Զէմիրէ»ն «հայկակա՞ն երաժշտութիւն է»: Նորից ու նորից հարկ է ասել. ճիշտ է՝ որ սա նախակոմիտասեան շրջանի մեծանուն կոմպոզիտորի գրչի արդիւնքն է, ճիշտ է՝ որ իտալական օպերայի եւ մասնաւորաբար վերդիի օպերաների հետ երաժշտալեզուական, գեղագիտական առնչութիւններ ունի, բայց սա հայ երաժշտի ստեղծածն է, մի արուեստագէտի, որ հաւատարիմ է իր ժամանակաշրջանին եւ միջավայրին, եւ մասնաւոր՝ իր լսարանին: Երանի կարողանալի այս պահին մէջբերել Մարտիրոս Սարեանի խօսքը, երբ Վարպետը հրաշալի հիմնաւորումներ է տալիս Յովհաննէս Ալվազովսկու արուեստի ազգային պատկանելիութեանը:

Թուում է, թէ ծովն ու հայկական բնապատկերը իրար խորթ աշխարհամասեր են: Սարեանի տուած բացատրականները այնքան համոզիչ են Ալվազովսկու ամբողջ ստեղծածը հայ գեղանկարչութեան օրգանական մասը նկատելու համար: Պիտի ուզէի, որ այս բացատրականը շատերս իմանայինք իբրեւ նման երեւոյթների ազգային պատկանելիութիւնը վերլուծելու, արժեւորելու սկզբունք, եւ այն կարողանայինք տարածել միւս արուեստների վրա եւս: Ահա այս հարցերը քննարկելիս, նորից անհրաժեշտութիւն է դառնում չի՜ղեցնել, որ հայ երաժշտական իրականութիւնը դարերով գտնուել է երկու աշխարհների՝ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ: Մենք ոչ միայն երկու կողմից ներառել ենք, այլ տուել ենք երկու կողմերին նաեւ: Առնելու եւ տալու երաժշտական

մտածողութեան մեր հարուստ փորձը նպաստել է մեր ինքնուրոյնութեանը եւ ինքնատիպութեանը: Խօսքը այստեղ փոխառութեան մասն օրինակներին չի վերաբերում, երբ հայանալ ու սիրուել կարող է մի դոգմախիանական «Միծեռնակ», Հայաստանի պետական հիմն դարձած մի «Մեր հայրենիք», մի «Հինգալա»...

Խօսքը համակարգային մտածողութեան մասին է: Չլինէր համակարգային մտածողութեան այս որոշիչ յատկութիւնը, հազիւ թէ կոմիտասը մեր պարզ մեղեդիները բազմաձայնութեան սկզբունքներ գոյացնէր: Եւ այս բազմաձայնութիւնն էլ իր մէջ ունի եւրոպական տարբեր դարաշրջանների փորձը՝ «հարմոնիա», «պոլիֆոնիա» հասկացութիւնների համաձայն: Այս հիմքի վրայ է գոյացել ներկայի հայ կոմպոզիտորական դպրոցը որ ունակ է թէ՛ հայ սիմֆոնիա թէ՛ հայ կոնցերտ գրելուն...

Միւս կողմից, առ այսօր կենդանի ապրող երգեր են Արեւելքի մէջ ամբողջովին թաթախուն, օրինակ՝ Պաղտասար Դպիրի, Սայաթ-Նովայի եւ այս աւանդոյթով ստեղծուած երգերը: Կոմիտասը երաժշտական այս երկու թեւերի նկատմամբ հոգատար է եղել եւ երաժշտական «մաքրակենցաղութիւն»ը իրեն առաջնորդ չի կարգել Արեւելք-Արեւմուտք երաժշտալարաբերութիւնների հարցը շօշափելիս: Հետեւելով իր օրինակին, մենք եւս մեր երաժշտական մշակոյթի օրգանական մասը հանդիսացող թէ՛ Արեւելքի եւ թէ՛ Արեւմուտքի յատկուութիւններով օժտուած երաժշտական մտածողութիւնը, եւ դրա արգասիքը հանդիսացող գեղարուեստական արժէքները, անշուշտ, մերը լինելու վրայ չպիտի կասկածենք: Լաւ կը լինի, որ մի օր այս կարգի հարցերի պատասխանը լիովին գիտակցուած լինի մեզանում, որ այլեւս չհարցնենք՝ «Զէմիրէ»ն հայկակա՞ն օպերա է, թէ՛ ոչ:

Յաւօք, ականատես ենք եղել մեծանուն կոմպոզիտորի արհեստավարժութիւնը կասկածի տակ դնելուն: Ճիշտ է որ, երաժշտութիւն գրելը կապուած է ակադեմիական յղուածութեան հասած տարբեր ճիւղերի հետ, ինչպիսին են օրինակ՝ հարմոնիան, պոլիֆոնիան, գործիքաւորումը, երաժշտական ձեւը, եւայլն: Այս եւ այլ տարբեր դիսկոմիսիաների ամբողջացմամբ է գոյանում մի պարտիտուրա, եւ այս տարբեր այսպէս կոչուած «դիսկոմիսիաներին» տիրապետելը պարտադիր պայման է եղել բոլոր ժամանակների կոմպոզիտորների համար: Ասում են որ, պոլիֆոնիայի իր մտածողութիւնը արթուն պահելու համար, վերդին ամբողջ կեանքի ընթացքին ֆուկայի աշակերտական վարժութիւններ է գրել: Այս առնչութեամբ ե՛ւս մի մանրամասն. հանճարեղ Շուբերտը իր գոյութեան վերջին տարիներին մի ուսուցիչ է գտել որի մօտ պոլիֆոնիայի իր փորձառութիւնը պիտի զարգացնէր: Հիմա գիտենք որ Շուբերտի երաժշտութիւնը կատարելութիւն է, որին որեւէ ուսուցիչ որեւէ բան չպիտի կարողանար յաւելել. հանճարեղ կոմպոզիտորին գիտելիք կամ փորձ ներարկելու պահին: Շուբերտն իրականում այդ ուսուցչի կարիքը չուէր:

Գալով մեր նիւթին, հարց տամ, ի՞նչն է կասկածի տակ դրւում երբ

փորձ է արւում Չուխաճեանի այս կամ այն պարտիտուրը վերագործիքաւորել: Ինչո՞ւ որեւէ մէկի մտքով չի անցնում պոլիֆոնիայի տեսակէտից պակասաւոր նկատել Շուբերտի այս կամ այն գործը: Անշուշտ բարբարոս պիտի լինէր միամիտը, որ հաւատալով Շուբերտի պոլիֆոնիայի դաս առնելու մղումին, բազմաձայնութեան այս ձեւը ներարկեր Շուբերտի գործերի մէջ:

Այս արծարծումները անհիմն չեն գոյանում Չուխաճեանի պարագային, քանի որ լսեցինք թէ ինչ արհեստավարժ գործիքաւորմամբ է հնչում «Զէմիրէ»ն, - այն էլ ոչ թէ առանձին դրուագների պարագային՝ այլ ամբողջութեամբ: Մեզանում գոյացած անցեալի որոշ արժէքներ «մշակելու» յաւակնտութիւնը գալով մի կողմէն եւս է կենդանի հնչողութեան բերուած Չուխաճեանի պարտիտուրան՝ որ վարպետ գրչի արդիւնք է, եւ վաւերական:

Գիտենք որ լուսահոգի Սակկիլարին, որի չիշատակի առաջ խոնարհուում եմ (միշտ սիրել եմ իրեն), ժամանակին «Զէմիրէ»ն վերագործիքաւորելու փորձ է արել: Այս անշուշտ իր անձնական նախաձեռնութիւնը չի եղել, Չուխաճեանի վարպետութիւնը կասկածանքի տակ առնողների նախաձեռնութիւնն է, որոնց ահա, Չուխաճեանն իր պատասխանն է տալիս Պարսումեանի օգնութեամբ:

Վաչէ Պարսումեանի կատարած աշխատանքի յատակ պատկերը ունենալու համար հարկ է տարբեր փուլերի բաժանել մի ամբողջութիւն, որ թերեւս սկսւում է Չուխաճեանական ձեռագրի որոնում-հայթայթումով, ու երբ պարզուում է, որ մեզ հասած օպերայի ձեռագրի գրական մասը իրար շարունակաբար յաջորդող թերթ լեզուներով է՝ տաճկերէնով, ֆրանսերէնով, իտալերէնով, Պարսումեանը դառնում է Չուխաճեանական օպերայի գրական մասի վարիչ, մասնագէտ չիշեալ երեք լեզուների, որ պիտի թարգմանի եռալեզու այս նիւթը՝ հայերէնի, ու սա դեռ բաւական չէ: Ով քիչ թէ շատ ծանօթ է գրական տեքստը երաժշտական տեքստի տակ տեղաւորելու ինդրին, ուր գործում է բառային վանկ-հնչիւն փոխ-կապակցութեան օրէնքը, նաեւ բառի շեշտի եւ երաժշտութեան շեշտի գուգակցման անհրաժեշտութիւնը, նա գիտի, թէ դա ինչ տարողունակ եւ յատուկ մասնագիտական պատրաստութիւն պահանջող գործ է:

Այս կարգի քանի-քանի մասնագիտական հմտութիւնների միջով անցնելուց յետոյ է, որ 100-ամեայ վաղեմութիւն ունեցող ձեռագիրը դրւում է աշխատանքային սեղանին բեմադրութիւն դարձնելուց առաջ: Լեզուի մասնագէտ (աւելի ճիշտ ասենք՝ լեզուների), խօսքերաժշտութիւն փոխկապակցութեան փորձառու, ձեռագրագէտ, երաժշտական խմբագիր եւ այսպիսի քանի-քանի մասնագիտութիւնների պիտի տիրապետի

մէկը, որ իր գոյութեան ընթացքում մէկ անգամ միայն բեմադրուած հակաճառաւ մի երաժշտական կառույց կենդանացնի: Երբ Պարսումեանը խօսում է Չուխաճեանի մասին, նրա անուան հետ եւ նրա շուրջ տեղի ունեցած այնպիսի պատմական մանրամասեր է մէջտեղ հանում, որ հասկանում ես՝ Չուխաճեանը եւ իր արուեստը անցել են Պարսումեանի ուսումնասիրութեան տասնամեակների հունով: Կա՞յ արդեօք մի թուղթ, մի գրութիւն, մի փաստաթուղթ, որ վերաբերւում է Չուխաճեանին, եւ այն վրիպել է Պարսումեանի ուշադրութիւնից:

Հիմա իմ սեղանին է խմբագրուած, վերջնական տեսքի բերուած Չուխաճեանի «Զէմիրէ»ի կլավիրի եւ պարտիտուրի տպագիր օրինակը: Այսպիսի մի աշխատանք անել եւ մի ամբողջ օպերա դնել սեղանին, ապահովելով գիտական արժանահաւատութեան մակարդակ, ինքնին մի ամբողջ սխրանք կարող էր նկատուել: Իմ բարեկամը արանով չի բաւարարուել: Շուրջը ամբողջացրել է մի հակադաս օրգանիզմ, որին մաս են կազմում բեմադրողը՝ երգիչ-երգչուհիներով, պարուսույցը՝ պարողներով, բեմին ծառայող նկարիչը, զգեստաւորողը, լոյսի մասնագէտը...

Հրաշալի է, որ Վաչէ Պարսումեանը ունի իր մտերիմները այս մասնագիտութիւններին տիրապետող մարդկանց շրջանակի մէջ: Այս ձեւով է, որ նա իր շրջապատին վարակում է ինկարկելու Չուխաճեանի ստեղծած բարձրարժէք գործը: Խնկարկումի այս ցնծութիւնը երեք ներկայացումների միջոցով լիովին բաժանեց լոսանձեւրսեան հանրութիւնը: Հրաշալի է, որ իր մտերիմների մէջ ունի իրեն հաւատացող, իրեն վստահող մարդիկ, որ կարող են նիւթական նեցուկ կանգնել այս գործին:

Անկասկած է, որ օպերայի բեմադրութեանը մասնակցած իւրաքանչիւր անձ (իր արածով մեծ կամ փոքր) արժանի է խոր յարգանքի եւ գնահատութեան: Ահա այսպէս Վաչէ Պարսումեանը իրականացրեց տարիների փայտաշառ ծրագիրը, մի քայլով եւս մօտեցնելով Չուխաճեանի ամբողջ օպերային ժառանգութիւնը բեմ բարձրացնելու յանդուգն երազանքը:

Այս գրութիւնը ամբողջացնելու համար ինձ մնում է մի հարց դնել: Պետական հովանաւորութիւն վայելող, աշխատելու տարիների փորձ եւ աւանդոյթ ունեցող Երեւանի Սպենդիարեանի անուան Պետական Ակադեմիական Օպերային Թատրոնի աշխատակազմը եւ դեկավատեղափոխել Չուխաճեանի այս օպերան, որով թէ ինքը կը հարատանար, եւ թէ մեզ կը հարստացնէր:

Չէ՞ որ «Զէմիրէ»ի չուխաճեանական ձեռագիրը եւ բեմադրուելու աշխատանքային նիւթը (կլավիր, ձայներ) մաքրուած-հրատարակուած վիճակով կան, պատրաստ տեղափոխուելու հայրենիք:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ՎԱՍՏ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680